ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Դարերի խորքերից մեզ են հասել հայ ժողովրդի հոգևոր մշակույթի բազմաթիվ հուշարձաններ։ Պահպանվող վավերագրերը և նյութերը հավաստում են, որ Հայաստանում արխիվներ եղել են ինչպես վաղ ժամանակներում, այնպես էլ նոր շրջանում։ Սակայն պետական ապարատի սիստեմում չի եղել մի այնպիսի օղակ, որը զբաղվեր արխիվային գործի և, ընդհանրապես, արխիվների գործունեության հարցերով։

Հայաստանում առաջին անգամ նման մըտահղացում առաջացել է 1919 թ., երբ հայ մըշակույթի մի խումբ ականավոր գործիչներ, այդ թվում Հովհ. Թումանյանը, Ալ. Շիրվանզադեն, Լեոն, Դ. Դեմիրճյանը և ուրիշներ, դիմել են կառավարությանը կենտրոնական դիվան հիմնելու խնդրանքով[1]։ Այդ դիմումը մնացել է անարդյունք։

Պետք է ասել, որ արխիվային արժեքավոր շատ փաստաթղթեր ոչնչացվել են թե՛ հին ու միջին դարերում, թե՛ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Երևանի նահանգի և Կարսի մարզի վարչական հիմնարկությունների ու հասարակական կազմակերպությունների մի մասի արխիվային նյութերը փոխադրվել են Հյուսիսային Կովկասի մի շարք քաղաքներ և, հիմնականում, կորստյան մատնվել բաղաքացիական պատերազմների տարիներին։ Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի տերիտորիայում եղած արխիվներին, ապա դրանք մոխրի են վերածվել արևմտահայության բռնի տեղահանման ու ընաջնջման հետ մեկտեղ։

Այդ տարիներին քիչ արժեքավոր արխիվներ չեն ոչնչացվել ու հափշտակվել օտարերկրյա պետությունների ներկայացուցիչների և դաշնակցական պարագլուխների կողմից։ Չնայած այս ամենին, այնուամենայնիվ, երկրում մընացել էին զգալի բանակությամբ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտաբար պետք է կենտրոնացվեին ու պահպանվեին։

Դրությունը արմատապես փոխվեց, երբ Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր։ Այդ է հավաստում Հայաստանի Հեղափոխական կոմիտեի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետը, որով պետականացվեցին հանրապետության ազգագրական թանգարանները, գրադարաններն ու էջմիածնի ձեռագրատունը (Մատենադարանը)[2]։ Հետագայում վերջինիս բազայի վրա հիմնվում է Հայաստանի կուստուր-պատմագիտական ինստիտուտը, որի խընդիրներից մեկը պատմա-գիտական արժեքավոր վավերագրերի հավաքումն էր։

Արխիվային նյութերի հայտնաբերման ու կենտրոնացման հարցերով զբաղվել են նաև ՀՍԽՀ լուսավորության ժողկոմատը, մասնավորապես նրան առընթեր Հայաստանի հեղափոխության թանգարանը և Հնությունների ու գեղարվեստական հուշարձանների պահպանման կոմիտեն։

«Խորհրդային Հայաստան» թերթի 1922 թ. հունվարի 7-ի համարում հրապարակված կառավարական մի շրջաբերականով խստորեն արգելվում էր արխիվային նյութերի ապօրինի ոչնչացումը և հաղորդվում բոլոր հիմնարկ-կազմակերպություններին, որ ՀՍԽՀ Ժողկոմխորհի որոշմամբ Լուսժողկոմատի տրամադրության տակ են դրվում բոլոր արխիվային նյութերը։

Հայկական հին ձեռագրերի, արխիվային կարևոր վավերագրերի և, ընդհանրապես, արխիվների նկատմամբ հոգատար վերաբերմունք են ցուցաբերել Սովետական Հայաստանի առաջին լուսժողկոմ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, հայ ժողովրդի պանծալի զավակ, Հանրապետության ժողկոմխորհի անդրանիկ նախագահ Ալ. Մյասնիկյանը, աշխարհահռչակ նկարիչ Մ. Սարյանը, Մոսկվայում Սովետական Հայաստանի ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը և ուրիշներ։ Նրանց ջանքերի շնորհիվ 1922 թ. հոկտեմբերին Լուսժողկոմատին ենթակա Հեղափոխության թանգարանին կից կազմակերպվել է հատուկ արխիվային բաժին։

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 218, թ. 71։

2 Տե՛ս «ՀՍԽՀ Դեկրետների և հրամանների ժողովածու», պր. 1, 1921, էջ 16։

ՀՍԽՀ Կենտգործկոմը 1923 թ. սեպտեմբերի 26-ին որոշում ընդունեց Հանրապետությունում Պետական կենտրոնական արխիվ ստեղծելու մասին։ Նույն որոշմամբ Աշ. Հովհաննիսյանին, Ա. Մռավյանին և Ա. Կարինյանին հանձնարարվեց մշակել կանոնադրություն Պետական կենտրոնական արխիվի վերաբերյալ։

1924 թ. փետրվարի 21-ին ՀՍԽՀ Կենտգործկոմը հաստատեց այդ կանոնադրությունը, որ հայ ժողովրդի պատմության մեջ առաջին օրենսդրական ակտն էր արխիվային գործի վերաբերյալ։ Ելնելով «ՌՍՖՍՀ արխիվային գործի վերակառուցման և կենտրոնացման մասին» Լենինյան դեկրետի (1918 թ. հունիսի 1) ցուցումներից, մեր հանրապետությունում ազգայնացվեցին բոլոր հիմնարկների արխիվները և հայտարարվեց դրանց միասնական լիսելը։ Համաձայն վերոհիշյալ Կանոնադրության, մի քանի արխիվային ֆոնդերի բազայի վրա 1924 թ. հոկտեմբերի 1-ին տեղի ունեցավ Պետական կենտրոնական արխիվի պաշտոնական բացումը։

Հանրապետության առաջին արխիվիստները մեծ եռանդով ու խանդավառությամբ ձեռնամուխ եղան արխիվային ֆոնդերի հայտնաբերման, կենտրոնացման, մշակման ու հաշվառման աշխատանքներին։

Պետական կենտրոնական արխիվի առաջին վարիչ պրոֆ. Խ. Սամվելյանի զեկուցագրերից մեկում կարդում ենք. «Դաշնակցական կառավարության արխիվները, ոստիկանական վարչության նյութերը գտել ենք և հանել Երևանի դեպոյի շոգեկաթսաներից»։ Նույն զեկուցագրում նշված է, որ «Էջմիածնի ոստիկանական վարչության արխիվը հայտնաբերվել է Երևանի սրահներից մեկում «աղբախառն ու խառնիխուռն վիճակում»[4]։ Մի այլ զեկուցագրում գրված է. «Էջմիածնի գավառային վարչության նյութերն իրենցից ներկայացնում են խառնիխուռն, անկարգ՝ իհարկե անսիստեմ շեղջակույտերի գործերից թափթփված թղթեր, որոնց մեծ մասը հողով և ցեխով է ծածկված»[5]։

Երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին Պետական կենտրոնական արխիվի կանոնադրությունն այլևս չէր համապատասխանում նոր առաջացած պահանջներին։ Բացի արխիվային նյութերի կենտրոնացումն ու պահպանումն ապահովելու խնդիրներից անհրաժեշտ էր նաև կազմակերպել այդ փաստաթղթերի օգտագործման աշխատանքները, ծառայեցնել դրանք ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի զարգացման նպատակներին։ Այդ կապակցությամբ 1929 թ. մարտի 16-ին ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահությունը և ԺողԿոմխորհը հաստատեցին Պետական կենտրոնական արխիվի նոր կանոնադրությունը։ Դա ժամանակին արված մի առաջընթաց քայլ էր հանրապետությունում արխիվային գործի հաջող կազմակերպման, պետական արխիվի իրավական ֆունկցիաների ճշգրտման ու ընդլայնման բնագավառում։

Համամիութենական կենտրոնական արխիվային վարչության ստեղծումով (1929 թ.) 1930-ական թթ. առաջին կեսին առաջընթաց տեղաշարժեր նկատվեցին նաև հանրապետության արխիվային գործում։ Հայաստանում ստեղծվեց Կենտրոնական արխիվային վարչություն իր երկու բաղկացուցիչ մասերով՝ Պատմության և Հոկտեմբերյան հեղափոխության ու սոցշինարարության պետական կենտրոնական արխիվներով։ Պետական արխիվներ ստեղծվեցին նաև հանրապետության բոլոր շրջաններում, իսկ գերատեսչական արխիվներ տասնյակ հիմնարկ-ձեռնարկություններում և կազմակերպություններում։

Այսպիսով, ԽՍՀՄ նոր Սահմանադրության ընդունման նախօրյակին մեր երկրում հիմնականում ավարտվեց արխիվային շինարարության կազմակերպչական շրջանը։ Պետական կենտրոնական արխիվներում, բացի փաստաթղթային նյութերի կոմպլեկտավորման, հաշվառման ու մշակման աշխատանքներից, առաջին քայլերն արվեցին արխիվային վավերագրերը գիտական նպատակներով օգտագործելու ուղղությամբ։

1930-ական թթ. սովետական երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում տեղի ունեցած արմատական տեղաշարժերին, պետական իշխանության ու պետական կառավարման բարձրագույն մարմինների վերակառուցմանը հաջորդեց պետական արխիվների սիստեմի վերակառուցումը։ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1938 թ. օգոստոսի 7-ի որոշմամբ հանրապետության Կենտրոնական արխիվային վարչությունը և պետական կենտրոնական արխիվները հանձնվեցին ՀՍՍՀ Ներքին գործերի ժողկոմատի իրավասությանը։ Կենտրոնական արխիվային վարչությունը վերանվանվեց ՀՍՍՀ Ներքին գործերի ժողկոմատի արխիվային բաժին։ Նրա վրա դրվեցին հանրապետության պետական արխիվային ֆոնդի փաստաթղթային նյութերի հաշվառման, պահպանման, գիտա-տեխնիկական մշակման աշ-

---

3 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 128, թ. 39։

4 Նույն տեղում, ֆ. 228, ց. 1, գ. 194, թ. 11։

5 Նույն տեղում, գ. 18, թ. 5։

խատանքների կազմակերպման, կենտրոնական և շրջանային (քաղաքային) պետարխիվների գործունեության ղեկավարման, պետական և գերատեսչական արխիվներում պահպանման ենթակա և ոչ ենթակա փաստաթղթային նյութերի ընտրության և հսկողության, այդ նյութերը սոցիալիստական շինարարության նպատակներին ծառայեցնելու և արխիվային գործի զարգացման գիտա-մեթոդական աշխատանքները գլխավորելու ֆունկցիաները[6]։

Հանրապետության արխիվային հիմնարկները ներքին գործերի ժողկոմատի իրավասությանը հանձնելու պահին ՀՍՍՀ պետական կենտրոնական արխիվներում հաշվվում էր 347 ֆոնդ՝ շուրջ 190 հազար պահպանման միավորներով, իսկ Հայաստանի 38 շրջաններից 33-ը ունեին պետական արխիվներ, որոնցում արխիվային փաստաթղթերը հիմնականում գտնվում էին չկարգավորված վիճակում։

ՀՍՍՀ Ժողկոմխորհը 1939 թ. օգոստոսի 23-ին, լսելով ՀՍՍՀ ժողկոմատներում, կենտրոնական հիմնարկներում և շրջաններում արխիվային գործի դրության հարցը, արձանագրել է փաստաթղթային նյութերի պահպանման ծայրահեղ անբավարար վիճակը և առաջարկել հիմնարկ-կազմակերպությունների ղեկավարներին ու շրջգործկոմների նախագահներին՝ արխիվները ապահովել չոր ու լուսավոր սենյակներով, համապատասխան կահավորումով, հաստիքային միավորներով և մեկ ամսվա ընթացքում գիտա-տեխնիկական մշակման ենթարկել կուտակված արխիվային փաստաթղթերը։

Նշանակալից երևույթ պետք է համարել պետական կենտրոնական արխիվների համար հատուկ շենք կառուցելու նախապատրաստական աշխատանքների ձեռնարկումը, ֆոնդերի գիտա-տեխնիկական մշակման ընդլայնումը, Գլխավոր արխիվային վարչության կողմից մշակված առաջին մեթոդական ձեռնարկներ ստանալը։ Այդ տարիներին մեթոդական աշխատանքների կազմակերպման համար հիմնական ուղեցույց է հանդիսացել «ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարիատների, հիմնարկությունների, ձեռնարկությունների և կազմակերպությունների արխիվային աշխատանքի վերաբերյալ հրահանգը», որը ստացման թվականին (1940 թ.) թարգմանվել է հայերեն, բազմացվել ու առաքվել հանրապետության խոշոր հիմնարկ-ձեռնարկություններին ու կազմակերպություններին։

1941 թ. մշակվեցին հանրապետության պետական կենտրոնական արխիվների կանոնադրությունները, սակայն դրանք չհաստատվեցին, քանի որ ՍՍՀՄ կառավարության կողմից 1941 թ. մարտի 29-ին հաստատված «ՍՍՀՄ պետական կենտրոնական արխիվների ցանցի» համաձայն Հայկական ՍՍՀ-ում Պատմության և Հոկտեմբերյան հեղափոխության ու սոցշինարարության պետական կենտրոնական արխիվների փոխարեն պետք է լիներ մեկ Պետական կենտրոնական արխիվ։ Դրա հետ մեկտեղ թույլատրվում էր ստեղծել նաև կինո-ֆոտո-ֆոնո փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ։ Միաժամանակ հաստատվեց «ՍՍՀՄ պետական արխիվային ֆոնդի մասին Կանոնադրությունը»։ Այդ կարևոր փաստաթղթերը, ինչպես նաև արխիվային նյութերի պահպանումն ապահովելու ուղղությամբ ձեռնարկված մյուս միջոցառումները, հաստիքային միավորների ու բյուջեի ավելացումը հուսադրող երաշխիք էին արխիվային գործի զարգացման, մասնավորապես պետական ու գերատեսչական արխիվների փաստաթղթային նյութերի կարգավորման խնդրում, եթե չսկսվեր Հայրենական մեծ պատերազմը, որն ընդհատեց ինչպես Սովետական Միության, այնպես էլ Հայկական ՍՍՀ արխիվային շինարարության ծրագրերի կատարման ընթացքը։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանրապետության արխիվներից գործող բանակ մեկնեցին շուրջ մեկուկես տասնյակ արխիվիստներ։ Թիկունքում մնացած արխիվիստների հիմնական խնդիրը դարձավ փաստաթղթային նյութերի անվնաս պահպանման ապահովումը և, հնարավորության սահմաններում, հայրենասիրական նպատակով այդ փաստաթղթերի բազմակողմանի օգտագործման կազմակերպումը՝ ծառայեցնելով դրանք գերմանական ֆաշիզմի դեմ մղվող պատերազմի պահանջներին։ Արխիվային բաժինը ուշադրություն է դարձրել ռազմա-ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող փաստաթղթերի հայտնաբերմանը. օրինակ, հանրապետության Երկրաբանական վարչությանն են ներկայացվել բազմաթիվ տեղեկանքներ երկրի բնական հարստությունների տեղավայրերի մասին, որոնք արժանացել են պատշաճ ուշադրության։

Հայտնաբերված արխիվային նյութերի հիման վրա հրապարակվեցին «Գերմանական իմպերիալիզմի զավթողական պլանները Անդրկովկասում և նրանց խորտակումը 1918 թ.» և այլ թեմաներով ուսումնասիրություններ։ Այդ փաստաթղթերն օգտագործվեցին նաև զորամասերում ու գործարաններում կազմակերպված դասախոսություններում, պարբերական մամուլում, ռադիոհաղորդումներում և այլն։

ՀՍՍՀ Ժողկոմխորհի 1943 թ. հոկտեմբերի 8-ի որոշմամբ հանրապետությունում կազմա-

---

6 Տե՛ս նույն տեղում, ց. 20, գ. 129, թ. 9։

կերպվեց կինո-ֆոտո-ֆոնո փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ[7]։

Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո պետական արխիվները շարունակեցին ընդհատված խաղաղ ժամանակաշրջանի իրենց գործունեությունը։ Սովետական Միության մյուս հանրապետությունների օրինակով 1945 թ. օգոստոսի 21-ին հիմնվել է պետական կենտրոնական արխիվին առընթեր գիտական խորհուրդ՝ արխիվային բաժնի պետի գլխավորությամբ։ Գիտական խորհուրդն ունեցել է իր նիստերը, որտեղ քննարկվել են արխիվային գործի սկզբունքային հարցեր, այդ թվում և հրատարակության հետ կապված խնդիրներ։

Կոմունիստական կուսակցությունը միշտ էլ առաջնահերթ նշանակություն է տվել տնտեսական-քաղաքական պրոբլեմների գիտական մշակմանն ու ընդհանրացմանը, իսկ արխիվների նյութերը միշտ էլ եղել են այդ պրոբլեմների հետազոտման և մշակման հավաստի սկզբնաղբյուր։ Ահա թե ինչու ՍՄԿԿ XX համագումարը պետական արխիվների առջև խնդիր դրեց՝ պայմաններ ստեղծել, որպեսզի գիտա-հետազոտական հաստատություններն ու կազմակերպությունները, ինչպես և առանձին գիտական աշխատողներ հնարավորություն ունենան բազմակողմանիորեն օգտագործելու արխիվային նյութերը։ 1956 թ. փետրվարի 7-ին ՍՄԿԿ XX համագումարի հրավիրման նախօրյակին, ՍՍՀՄ Մինիստրների սովետն ընդունել էր «Մինիստրությունների և գերատեսչությունների արխիվային նյութերի պահպանման ռեժիմի կարգավորման և օգտագործման բարելավման միջոցառումների մասին» որոշումը, մի ակտ, որը դարձավ սովետական արխիվաշինարարության վերելքն ապահովող գործունեության ծրագիր։

1956 թ. հունիսի 5-ին հանրապետության Մինիստրների սովետը ընդունեց «Մինիստրությունների և գերատեսչությունների արխիվային նյութերի լավագույն օգտագործման և դրանց պահպանման ռեժիմը կարգավորելու մասին» որոշումը։ Դրա իրականացման արդյունքն այն եղավ, որ արագացվեց պետական կենտրոնական արխիվների նոր շենքի կառուցումը, աշխուժացան սովետական ժամանակաշրջանի փաստաթղթերի օգտագործման աշխատանքները, ընդարձակվեցին փաստաթղթային սկզբնաղբյուրների գիտական ուսումնասիրությունների շրջանակները, կազմվեցին ուղեցույցներ, ֆոնդային ու թեմատիկ տեսություններ։ Առանձին ծավալ ու լրվանդակություն ստացան նաև պատմական վավերագրերի հրապարակման աշխատանքներն ու արխիվային վարչության գիտական խորհրդի գործունեությունը։ Ավելի ուշ, ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1958 թ. հունվարի 29-ի որոշմամբ ՀՍՍՀ ՆԳՄ արխիվային բաժինը վերանվանվեց Արխիվային վարչության, իսկ Պետական կենտրոնական արխիվը վերակազմվեց և ստեղծվեցին ՀՍՍՀ պատմության և Հոկտեմբերյան հեղափոխության ու սոցշինարարության պետական կենտրոնական արխիվներ[8]։

1958 թ. օգոստոսի 13-ին ՍՍՀՄ Մինիստրների սովետը հաստատեց «ՍՍՀՄ պետական արխիվային ֆոնդի մասին կանոնադրությունը» և պետական կենտրոնական արխիվներն ու արխիվային վարչությունների գիտա-հրատարակչական աշխատանք կատարող բաժինները դասեց գիտա-հետազոտական հիմնարկությունների շարքը։

1962 թ. հուլիսի 21-ին ՀՍՍՀ Մինիստրների սովետը, եղբայրական մյուս հանրապետությունների օրինակով, որոշում ընդունեց «Ներքին գործերի մինիստրության արխիվային վարչությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Արխիվային վարչության վերակազմելու մասին»[9]։ Այս վերակառուցումն արմատական նշանակություն ունեցավ արխիվային գործի բարելավման խնդրում։

Հաստատվեց Արխիվային վարչության նոր կանոնադրությունը։ Տեղի ունեցան նաև մի շարք կառուցվածքային փոփոխություններ։ 1963 թ. հունիսի 11-ին ընդունվեց ՀՍՍՀ Մինիստրների սովետի նոր որոշումը «Հանրապետության արխիվային գործի վիճակի և նրա հետագա բարելավման միջոցառումների մասին»[10]։

1963 թ. հուլիսի 25-ին ՍՍՀՄ Մինիստրների սովետն ընդունեց «ՍՍՀՄ արխիվային գործի բարելավման միջոցառումների մասին» որոշումը, որը պարտավորեցնում էր բոլոր մինիստրություններին, գերատեսչություններին, աշխատավորների դեպուտատների սովետների գործկոմներին, ինչպես նաև հիմնարկ-ձեռնարկություններին ու կազմակերպություններին՝ 1963—1965 թթ. ընթացքում ավարտել իրենց մոտ գտնվող արխիվային փաստաթղթերի գիտա-տեխնիկական մշակումը և սահմանված կարգով հանձնել պետարխիվներին։ Որոշումը պահանջում էր նաև միջոցներ ձեռնարկել ապահովելու արխիվների համապատասխան կադ-

---

7 Տե՛ս նույն տեղում, գ. 5, դ. 7, թ. 10։

8 Տե՛ս «Բաներեր Հայաստանի արխիվներից», 1965, № 1 (10), էջ 125։

9 Տե՛ս «Ինֆորմացիոն բյուլետեն», 1962, № 1 (21), էջ 3։

10 Տե՛ս «Բաներեր Հայաստանի արխիվներից», 1965, № 1 (10), էջ 127։

բերով ու հարմարավետ շենքերով, իսկ Գլխավոր արխիվային վարչությունը պարտավոր էր սահմանել պետական արխիվներն ընդունվող փաստաթղթերի տեսակները, վերացնել հանրապետությունների պետական արխիվներում եղած լուրջ թերությունները, բարելավել վերահսկողությունն ու գործնական օգնությունը դերատեսչական արխիվների նկատմամբ։ Որոշումը պահանջում էր նաև ուժեղացնել դերատեսչական հիմնարկների գործավարության փաստաթղթային մասի դրվածքի և արխիվների (մասնավորապես մշտական պահպանման ենթակա նյութերի) նկատմամբ հսկողությունը, տեխնիկական, կինո-ֆոտո-ֆոնո փաստաթղթերի պահպանման ապահովման հետ կապված պրոբլեմների ուսումնասիրումն ու հիմնավորումը, արխիվային գործում նոր տեխնիկայի ներդրումը, փաստաթղթերի բազմակողմանի օգտագործման կազմակերպումը։ ՍՍՀՄ Մինիստրների սովետի այդ որոշման կենսագործումը սովետական արխիվիստների համար հասունության քննություն պետք է հանդիսանար։ 1963 թ. հոկտեմբերին Հայաստանի արխիվիստների հանրապետական խորհրդակցությունում լսվեց «ՀՍՍՀ պետական և դերատեսչական արխիվների խնդիրները ՍՍՀՄ Մինիստրների սովետի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի արխիվային գործի վերաբերյալ որոշումների լույսի տակ» հարցի մասին ՀՍՍՀ արխիվային վարչության պետի զեկուցումը և ընդունվեց միջոցառումների պլան։

Ելնելով արխիվային գործի հետագա զարգացման խնդիրներից, 1965 թ. մշակվեց հանրապետության արխիվային շինարարության 1966—1970 թթ. հեռանկարային պլան, որի հիմքում դրվեց արխիվային գործի վերաբերյալ կառավարական նոր որոշումների կենսագործումը։ 1967 թ. հիմնվեց արխիվային վարչության կոլեգիան։

1969 թ. դեկտեմբերի 30-ին ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահությունը իր նիստում քննարկելով Գլխավոր արխիվային վարչության հերթական անելիքների հարցը, նշեց ՍՍՀՄ պետական արխիվային ֆոնդի կոմպլեկտավորման, դրա պահպանումն ապահովելու և արխիվային գործում հայրենական ու արտասահմանյան գիտության ու տեխնիկայի նվաճումների օգտագործման բնագավառներում գոյություն ունեցող լուրջ թերությունները, արձանագրեց, որ բազմաթիվ մինիստրություններ, դերատեսչություններ ու այլ կազմակերպություններ անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում արխիվային գործին, ժամանակին պետական պահպանման չեն հանձնում դերատեսչական արխիվներում եղած ժամկետանց նյութերը։ Նիստը արձանագրեց նաև, որ դեռևս կան մեծ քանակությամբ անմշակ արխիվային փաստաթղթեր, որ թե՛ Գլխավոր արխիվային վարչությունը, թե՛ հանրապետական արխիվային վարչությունները և թե՛ պետական արխիվները կոնկրետ միջոցառումներ չեն ձեռնարկում նկատված թերությունները վերացնելու ուղղությամբ։

1970 թ. հուլիսի 23-ին ՀՍՍՀ Մինիստրների սովետը քննարկեց վերոհիշյալ որոշման կատարման՝ ընթացքը և ընդունեց նոր որոշում։ Այդ որոշման մեջ հանրագումարի էին բերվում արխիվային հիմնարկությունների վերջին տարիների ընթացքում ձեռք բերած հաջողությունները և արձանագրվում էր, որ հանրապետության պետական կենտրոնական արխիվները համալրվել են ինչպես մինչսովետական, այնպես էլ սովետական ժամանակաշրջանների արժեքավոր արխիվային փաստաթղթերով, որ բարելավվել են արխիվային նյութերի հաշվառումը, գիտա-տեխնիկական մշակումը, գիտատեղեկատու ապարատի ստեղծումը, փաստաթղթերի բազմակողմանի օգտագործումը, հրատարակչական աշխատանքները և այլն։ Այդ նույն որոշմամբ վերացվեցին Լենինականի, Կիրովականի, Ղափանի և Էջմիածնի քաղաքային պետական արխիվները, որոնց փաստաթղթային նյութերի բազայի վրա այդ քաղաքներում ստեղծվեցին ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցշինարարության պետական կենտրոնական արխիվների չորս մասնաճյուղեր։ Դրանք իրենց վրա վերցրին նաև լուծարքված քաղաքային պետական արխիվների պարտականությունները։

Արխիվային վարչությունը և պետական արխիվները 1970 թ. տարեվերջին մշակեցին նոր հնգամյա (1971—1975 թթ.) պլաններ, որոնցում նոր բնագծեր սահմանվեցին հանրապետության արխիվային գործի հետագա զարգացման համար։ Նախատեսվեցին մի շարք միջոցառումներ սովետական ժամանակաշրջանի փաստաթղթային նյութերի կոմպլեկտավորման, գիտա-տեղեկատու ապարատի ստեղծման ու կատարելագործման, գործավարության ու դերատեսչական արխիվների դրվածքի ու աշխատանքների բարելավման ուղղությամբ։

ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1973 թ. հունվարի 24-ի որոշմամբ ՀՍՍՀ-ում ստեղծվեց հայ պարբերական մամուլի պետական կենտրոնական արխիվ։ Դա, ինչ խոսք, խոշոր իրադարձություն է ոչ միայն արխիվային շինարարության պատմության մեջ, այլև հանրապետության մշակութային կյանքում։

Անցած 50 տարիներին մեծ փոփոխություններ են կատարվել հանրապետության արխիվա-

յին շինարարության բնագավառում։ Շնորհիվ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատար վերաբերմունքի, ընդամենը չորս արխիվային ֆոնդերի բազայի վրա ստեղծված պետական կենտրոնական մեկ արխիվի փոխարեն այժմ Հայաստանում գործում են պետական կենտրոնական չորս արխիվներ, ՀՀՍՇՊԿԱ-ի չորս մասնաճյուղեր, 34 շրջանային ու բազմաթիվ գերատեսչական արխիվներ։

Պետական արխիվներում արմատական փոփոխություններ են տեղի ունեցել նաև փաստաթղթային նյութերի կոմպլեկտավորման և գիտական ու գործնական արժեքավորման աշխատանքներում։ Եթե նախկինում պետական պահպանման էին ընդունվում միմիայն լուծարված կամ առանձին գիտա-պատմական արժեք չստեղծող հիմնարկ-ձեռնարկությունների ու կազմակերպությունների արխիվային նյութերը, ապա այժմ արխիվադարաններում կարող են տեղ գրաղեցնել բացառապես առաջնակարգ օբյեկտների, այն էլ պատմության համար որոշակի արժեք ներկայացնող արխիվային գործերը։ Այդ ապահովելու համար ՀՍՍՀ արխիվային վարչության և Հոկտեմբերյան հեղափոխության ու սոցշինարարության պետական կենտրոնական արխիվի անմիջական վերահսկողության տակ են գտնվում ոչ միայն կարևորագույն հիմնարկ-ձեռնարկությունների ու կազմակերպությունների արխիվները, այլև դրանց ընթացիկ գործավարության փաստաթղթային մասի դրվածքին վերաբերող խնդիրները։

Հանրապետության արխիվային հիմնարկները բազմիցս առաջ են բաշել մեր երկրի տարբեր վայրերում գտնվող և հայ ժողովրդի պատմության բազմապիսի հարցերին վերաբերող արխիվային նյութերն ըստ պատկանելության հանձնելու խնդիրը։ ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր գլխավոր արխիվային վարչությունը, հաշվի առնելով հանրապետության արխիվների հիմնավորված պահանջը, օժանդակել է եղբայրական հանրապետություններից՝ Ռուսաստանից, Վրաստանից ու Մոլդավիայից ստանալու 50-ից ավելի ֆոնդեր, շուրջ 20 հազար պահպանման միավորներով, որոնք կարևոր նշանակություն ունեցան հանրապետության Պետական կենտրոնական պատմության արխիվի հարստացման գործում։ Միաժամանակ ծավալվել են Սովետական Միության մի շարք արխիվներում հայ ժողովրդի պատմության վերաբերյալ առանձին ֆոնդերում պահպանվող փաստաթղթային նյութերի միկրոպատճենահանման աշխատանքները։ Սովետական Միության 22 արխիվներից ստացվել են շուրջ 560 հազար միկրոկադրեր, որոնք համալրում են հայ ժողովրդի պատմության տարբեր հարցերի վերաբերող մեր արխիվների փաստաթղթային նյութերը։

Աշխուժացել է արտասահմանյան հայ գաղթօջախների առաջադեմ գործիչների անձնական արխիվները, սոցիալիստական և անգամ առանձին կապիտալիստական երկրների արխիվներում ու թանգարաններում պահվող՝ հայկական հարցին վերաբերող փաստաթղթերի միկրոպատճենների ստացումը։ Վերջին տարիներս արտասահմանից ստացվել են 98 հազարից ավելի միկրոկադրեր, ըստ որում Վաշինգտոնի ազգային արխիվից՝ 16 հազար, Բրիտանական ազգային արխիվից՝ 45 հազար, Փարիզի ազգային գրադարանից՝ 35 հազար, Ռումինիայից՝ 1900։

Եթե նախկինում արխիվներին հատկացվում էին մութ ու խոնավ նկուղային կամ խարխուլ շենքեր ու սենյակներ, երբեմն առանց դարակակալների, սեղանների ու աթոռների, ապա այժմ պատկերը միանգամայն փոխվել է։ Այժմ բոլոր պետական արխիվները տեղավորված են նորակառույց կամ հարմարեցված շենքերում, ապահովելով փաստաթղթային նյութերի հարատև կյանքը։ Արդեն սկսվել են պետական կենտրոնական արխիվների հիմնական շենքի աջ թևի յոթհարկանի առանձնաշենքի շինարարական աշխատանքները, որի կառուցմամբ պահպանվող արխիվային միավորների թիվը կկրկնապատկվի։

Հարյուրապատկվել և որակական փոփոխությունների է ենթարկվել հանրապետության պետական ու գերատեսչական արխիվների կադրերի կազմը։ Աշխատողների զգալի մասն ունի բարձրագույն ու մասնագիտական կրթություն, վարպետորեն տիրապետում է արխիվային գիտելիքներին։ Տասից ավելի արխիվիստներ պաշտպանել են դոկտորական և թեկնածուական դիսերտացիաներ և այժմ հաջողությամբ աշխատում են հանրապետության բարձրագույն ուսումնական կամ գիտա-հետազոտական հաստատություններում։

Հանրապետության արխիվները, ղեկավարվելով կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության որոշումներով, զգալի ներդրում ունեն հայ պատմագիտության, մշակույթի և արվեստի զարգացման գործում։ Միայն վերջին երկու տասնամյակների ընթացքում լույս են տեսել 15 թեմատիկ ժողովածուներ, որոնք կազմվել ու խմբագրվել են արխիվիստների և գիտա-հետազոտական այլ ինստիտուտների գիտաշխատողների ջանքերով։ Այդ տարիներին հրապարակվել են «Գիտա-ինֆորմացիոն բյուլետենիս»՝ 21, «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսի՝ 36 համարներ, որոնցում լրիվ տպագրվել կամ քաղվածաբար «գ-

տպագրվել են հազարավոր փաստաթղթեր։ Այժմ «Բանբերը» ճանաչում է ստացել և Հայաստանի սահմաններից դուրս, մասնավորապես արտասահմանի հայաշատ գաղթավայրերում։

Այժմ հրատարակության համար պատրաստ են շուրջ մեկ տասնյակ ժողովածուներ, այդ թվում՝ «ՀՍՍՀ ինդուստրացման պատմությունը 1926—1940 թթ.», «ՀՍՍՀ գյուղատնտեսության կոլեկտիվացումը 1927—1937 թթ.», «Էներգետիկայի զարգացումը Սովետական Հայաստանում 1920—1970 թթ.», «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմին», «Հովհաննես Բսակով», «Անդրանիկ Օզանյան» և այլն։ Բացի այդ, տարբեր հրատարակությունների կողմից լույս ընծայված բազմաթիվ ուսումնասիրություններում և մենագրություններում շարադրված ու պաշտպանված դոկտորական ու թեկնածուական դիսերտացիաներում առատորեն օգտագործվել են հանրապետության պետական կենտրոնական արխիվների վավերագրերը։

Այժմ պետական կենտրոնական արխիվների գիտաշխատողները հանդես են գալիս նաև արտասահմանյան հայ առաջադիմական մամուլում, ուր բնութագրելով հրապարակվող վավերագրերի արժեքը, միաժամանակ բարձրացնում են հայ ժողովրդի պատմությանը վերաբերող արխիվները գաղթավայրերից Սովետական Հայաստան փոխադրելու անհրաժեշտության հարցը։

Արխիվային վարչության և պետական արխիվների առօրյա աշխատանքներում կարևոր տեղ է գրավում փաստաթղթերի հիման վրա թեմատիկ ցուցահանդեսների կազմակերպումը։ 1956—1972 թթ. պետական կենտրոնական արխիվները կազմակերպել են 25-ից ավելի ցուցահանդեսներ, որոնք աշխատավորության կողմից դիտվել են մեծ հետաքրքրությամբ։

Արխիվային փաստաթղթերը այժմ մեծ օգտագործում են ստացել հեռուստատեսության ստուդիայում, վավերագրական ու խրոնիկալ կինոնկարներում, ռադիոհաղորդումներում և այլն։

Այժմ հանրապետության պետական կենտրոնական արխիվներն աճել ու ամրապնդվել են և կարևոր աշխատանք են կատարում վերածնված սոցիալիստական Հայաստանի հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությամբ առաջացած և հնուց ժառանգություն մնացած փաստաթղթային նյութերի պահպանումն ապահովելու, գիտա-տեղեկատու ապարատ ստեղծելու և կատարելագործելու, ինչպես նաև փաստաթղթերի բազմակողմանի օգտագործման ուղղությամբ։

Ծավալվել են արխիվային ֆոնդերի ապահովագրման ու միկրոֆոտոլաբորատորիայի աշխատանքները, համալրվելով ժամանակակից արխիվային տեխնիկայով՝ տարբեր տիպի բազմացնող մեքենաներով ու հարմարանքներով։ Կինո-ֆոնո-ֆոտո արխիվն ունի կինոժապավենների վերականգնման, երևակող, պատճենահանման, ձայնամոնտաժման մեքենաներ, կինոնկարահանման ու ցուցադրման տարբեր ապարատներ և այլն։

Անցած 50 տարիներին արխիվային շինարարության բնագավառում ձեռք բերված նվաճումներն արդյունք են ոչ միայն հանրապետության արխիվիստների քրտնաջան աշխատանքի, այլև Հայաստանի կուսակցական ու սովետական ղեկավար մարմինների և Սովետական Միության արխիվային վերադաս հիմնարկների մեծ օգնության։

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԹԻՎ

ՀՍՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հրատարակության է պատրաստում Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը։

Հազար տարի է անցել Նարեկացու (951—1003) ապրած ժամանակաշրջանից, սակայն նրա ստեղծագործությունն այսօր էլ պահպանել է իր գեղարվեստական հմայքը։

«Մատեան ողբերգութեանը» Նարեկացին ավարտել է 1002 թվականին։ Այն մեզ է հասել բազմաթիվ ընդօրինակություններով՝ լրիվ, թերի բաղվածո կամ հատվածաբար։ Ընդհանուր թիվն անցնում է 200-ից, որից շուրջ 150-ը գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, 19-ը՝ Վենետիկում, 27-ը՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի գրատանը[1]։ Լավագույն բնագիրը, ինչպես ընդունված է, համարվում է հեղինակի ինքնագիրը, որ նրա կամքի վերջնական արտահայտությունն է, ստեղծագործության իսկականը։ Դժբախտաբար չի պահպանվել ոչ միայն Նարեկացու ինքնագիրը, այլև գոնե XI դարի որևէ ընդօրինակություն։ Հնագույն ձեռագրերը XII դարից են։

1 Երուսաղեմի ձեռագրերից 20-ի նկարագրությունը կա Ն. Պողարյանի կազմած «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց» II—VI հատորներում։